ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23.10.2018թ.
(արձանագրություն №2)

ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով Գիտական խորհուրդը որշում է.

Հանձնարարել Լեզվի ուս. կենտրոնի տնօրեն Ռ.Հ.Շահինյանին.

1. ՀԱԱՀ Լեզվի ուսուցման կենտրոնում սույն թվականի նոյեմբերի 9-ից սկսած կազմակերպել օտար լեզվի (անգլերեն) դասընթացներ՝ չորս փուլով (մակարդակով), յուրաքանչյուրի տևողությունը սահմանելով երկու ամիս (ընդհանուր՝ 36 ժամ, մեկ դասաժամի տևողությունը՝ 90 րոպե, 10 րոպե ընդմիջումով):
2. Ուսուցման խմբերը ձևավորել 14-16 անձից: Յուրաքանչյուր փուլում (մակարդակում), ուսանելուց հետո ունկնդիրների համար կազմակերպել ավարտական թեսթավորում, որը, հաջողությամբ հանձնելու դեպքում, ընձեռել հաջորդ փուլում (մակարդակում) ուսանելու հնարավորություն:
3. Մեկ փուլի (մակարդակի) դասընթացի ընթացքում դասաժամերին 25% և ավելի բացակայության դեպքում ունկնդրին չի թույլատրվում մասնակցել ավարտական թեսթավորմանը:
4. Դասընթացների մեկ փուլի վճարը սահմանել՝ ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար՝ 7.000 ՀՀ դրամ, այլ անձանց համար՝ 16.000 ՀՀ դրամ: Վճարումները կատարվում են մինչև դասընթացի սկիզբը:
5. Սահմանել, որ որևէ փուլի (մակարդակի) ավարտական թեսթավորմանը չմասնակցելու (դասընթացներին բացակայության, թեսթավորմանը չներկայանալու կամ այլ պատճառով), թեսթը չհաղթահարելու կամ որևէ այլ դեպքում վճարված գումարը վերադարձման ենթակա չէ:
6. Սահմանել, որ որևէ փուլի (մակարդակի) ավարտական թեսթավորմանը չմասնակցելու կամ թեսթը չհաղթահարելու դեպքում ունկնդիրը հնարավորություն է ստանում կրկնելու նույն փուլի (մակարդակի) դասընթացը՝ ՀԱԱՀ

պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը՝ 14.000 ՀՀ դրամով, այլ անձինք՝ 16.000 ՀՀ դրամով:

7. ՀԱԱՀ Լեզվի ուսուցման կենտրոնում դասընթացները կազմակերպել պայմանագրային հիմունքներով, դասախոսական կազմի՝ նշված դասընթացների համար ամսական աշխատավարձը սահմանելով 78.000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերի գումարը:

Սույն որոշումը ներկայացնել ՀԱԱՀ Ռեկտորի հաստատմանը

Գիտական խորհրդի նախագահ՝ Վ.ՈՒՌՈՒՏՅԱՆ

Գիտ.քարտուղար՝ Դ.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ